ԹԷ ԹԱՓԱՌՈՒՄ ԵՄ

ՊՈՒՇԿԻՆ-ից

Թարգմ. Կ. Կրասիլնիկեանի

Թէ թափառում եմ մեծ փողոցներում,
Թէ մանում եմ բազմամարդ տաճար,
Թէ նստում անմիտ պատանեաց կշտին,
Խոր մտածման մէջ կորչում եմ իսպառ։
Ես ասում եմ միշտ՝ դարեր կընթանան,
Եւ որքան այստեղ մենք կանք կենդանի,
Ողջ պիտի իջնենք այն տնդարձ աշխարհ,
Եւ մէկի ժամը մօտ է վախճանի։
Թէ նայում եմ ես մենաւոր կաղնուն,
Ես մտածում եմ՝ մօտ սպագալին
Այդ նահապետը ինձ էլ կը թաղի,
Ինչպէս թաղել է և՛ մեր պապերին։
Թէ փողոքշում եմ նաղելի մանկան
Ես միշտ ասում եմ՝ հոդեակ իմ ներքիր,
Քեզ համար ահա տեղ եմ զիջանում,
Ինձ պէտք է փթել, իսկ դու գեռ ծաղկիր։
Օրեր, տարիներ ես սովորել եմ
Այս մտածութեամբ միշտ անցուցանել,
Եւ գալիք մահուան սև տարեդարձը
Չանում նոցա մէջ շուտով գուշակել։
Եւ ուր ճակատագիր ինձ ման կուղարկի,
Պանդխտութեան մէջ, կու

թէ ծովում,

Թէ անշունչ դիակս անհետ պիտ կորչի
Իմ այս հարևան դալար հովիտում։
Թէպէտ անզգայ իմ բոլոր մարմնին
Ողջ մէկ է ուր որ փթթելու լինի—
Սակայն սիրալիր մօտ իմ վախճանին
Ես էլի կրկին հանգչիլ կ'ուզէի։
Սառ գերեզմանիս մուտքի առաջև
Թող մատաղ կեանքը ժպտայ ու խաղայ։
Եւ բնութիւնը լի գեղեցկութեամբ
Փայլի յաւիտեան շիրիմիս վերայ։

1884 Թ. Բագու։